

**ՀՈՒՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԻ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԱՐՃՃԵՆ ԿՆԻՔ
ՊԵՏԱԿԱՆ ԷՐՄԻՏԱԺԻ ՀԱՎԱՔԱՄՈՒՈՒՄ**

Վ. Ս. ՇԱՆԻՐՈՎՍԿԱՅԱ (Լեհեգրադ), Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Արճճե կախովի կնիքները (մուիրդորոպները), որոնց թվին է պատկանում և սույն հոդվածի նյութ հանդիսացածը, Բյուզանդիայում լայն տարածում ունեին: Նրանք գործածության մեջ էին IV-ից մինչև XV դարը, և հարուստ նյութ են պարունակում իրենց ժամանակաշրջանների ուսումնասիրության համար: Այդ կնիքները առաջին կարգի պատմական աղբյուր են, քանզի հնարավորություն են տալիս Բյուզանդական կայսրության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը, կայսրության՝ Արևմուտքի և Արևելքի հետ ունեցած կապերը ուսումնասիրելու համար: Ծագելով որպես ապրանքային կապարակնիքներ (պլոմբ), դրանք օգտագործվում էին պաշտոնական և սննդական թղթակցության կնքման համար, ծառայում որպես փաստաթղթի, նամակի իսկության հաստատագիր, նրանց բովանդակած գաղտնիքի պահպանության միջոց:

Կապարակնիքները ըստ էության դրոշմակ-դրոշմամայրի դրոշմվածքներ են: Նրանց մեջտեղում եղած անցքից թել էր անցկացվում՝ փաստաթղթին ամրացնելու համար: Այդ թելը դրոշմամայրով այնպես էր ճնշվում, որ փաստաթուղթը կարելի էր բացել միայն թելը կտրելով: Կնիքի թիթեղիկի սովորական տրամագիծը 15-ից մինչև 45 մմ էր: Թիթեղիկի տրամագծի փոքրության պատճառով վարպետի գործը բավականին դժվար էր, արձանագրությունը փորագրելիս նա ստիպված էր բառերը հապավել, քրիստոնեական պատկերներ փորագրելու դեպքում (Աստվածածնի, Քրիստոսի, սրբերի) դրանք տալ մինչև կուրծքը, և ոչ ամբողջ հասակով:

Կապարակնիքի կյանքի ժամանակը կախված էր նրա օգտագործման հաճախականությունից: Մասնավոր անձինք հազվադեպ էին այն նորացնում, բայց պաշտոնական անձինք, իրենց տիտղոսի, ծառայության վայրի փոփոխության հետ միասին ստիպված էին նոր կապարակնիքի պատվիրել: Կնիքի արձանագրությունը արտացոլում է նրա տիրոջ տվյալ պահին զբաղեցրած դիրքը, հանգամանք, որ վկան է հաղորդած տեղեկությունների արժանահավատության: Հենց սրանում է բյուզանդական կնիքների գլխավոր արժեքը:

Մեղ են հասել բյուզանդական շուրջ 80 հազար արճճե կնիքներ, սակայն փաստաթղթերի վրա ամրացված կնիքները հազվադեպ են հանդիպում, քանի որ անվերադարձ ոչնչացել են հենց փաստաթղթերը: Հարկ է նշել, որ կնիքների առանձին գոյությունը զգալի դժվարություններ է հարուցում նրանց ժամանակը որոշելու գործում:

Բյուզանդական արճճե կնիքներ հայտնաբերվել են (և հայտնաբերվում են) նախկին Բյուզանդական կայսրության տարածքում, հաճախ այն երկրներում, որոնց հետ Բյուզանդիան կապեր ուներ: Բյուզանդական արճճե կնիքների հավաքածուները բազմաթիվ են: Դրանք և՛ պետական պահոցներ են, և՛ մասնավոր անձանց հավաքածուներ և հիմնականում պահվում են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Հունաստանում, Ավստրիայում, Թուրքիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Լեհաստանում և այլուր: Լենինգրադի Պետական էրմիտաժում պահվում են բյուզանդական 12 հազար արճճե կնիքներ և Դըմբարտոն Օբսից (ԱՄՆ) հետո իրենց քանակով գրավում են երկ-

որորդ տեղը: Պետական էրմիտաժի հավաքածուի հիմքում ընկած են նախ-
կին ԺԿՍՍՄԱՆՂՆՈՒԳՐԱԻ Ռուսական Հնագիտական Ինստիտուտին (Рус-
ский Археологический Институт в Константинополе) պատկանած, ապա
հռուսական ու բյուզանդական կնքագրությունների հայտնի հետազոտող Ն. Պ.
Լիխաչովի անձնական հավաքածուի կնիքները:

Երմիտաժի կնիքների հավաքածուի մեծ մասը (մոտ 8 հազար կնիք) արձանագրություն ունի, որոնք հիմնականում հունարեն են, բայց կան և օտարալեզու, ինչպես և երկլեզվյան՝ լատինական, արաբական, ասորական, ճարտինա-հունական, հունա-արաբական, և, սույն հոդվածի նյութ դարձած, մեկ հունա-հայկական արձանագրություններ։ Կնիքների իմաստավորումը ղգալի չափով դժվարանում է նրանց վատ պահպանության պատճառով։

Հունահայկական արձանագրությամբ բյուզանդական արձճն կնիքներից առաջինը հրապարակեցին ամերիկացի բյուզանդագետներ Բերնարդ Քուլին և Զոն Էսքիտը: Նրանք նշում են, որ դեռևս VI դարից հայտնի են հուսա-լատինական արձանագրությամբ բյուզանդական արձճն կնիքներ: VII դարի առաջին տասնամյակներից լատիներեն արձանագրությամբ կնիքները վերանում են (բացառությամբ կայսերական կնիքների), մասնավոր անձանց և պետական կնիքների լեզուն մինչև X դարի վերջին տասնամյակները հունարենն է: Շուրջ 950 թ. մինչև շուրջ 1050 թ. պահպանվել են սահմանափակ թվով կնիքներ արաբերեն և ասորերեն արձանագրությամբ:

Հունարենն և հայերենն արձանագրությամբ առաջին հայտնի կնիքը ունի 22 մմ տրամագիծ։ Ք. Փուլին և Ջ. Նեսիրտը, ելնելով տառերի ձևից, կնիքը թվագրում են X դարի վերջով—XI դարի սկզբով։ Կնիքի մի երեսի վրա կա հինգ տողից բաղկացած հունարեն արձանագրություն, որ հեղինակների կողմից վերծանված է հետևյալ կերպ.

«Κ(ῶν)ε | β(α)| γδϵ | εωιζ | τ(θ)

Μαγ[ι]α[ρ](ι) | ζαη | τ(θ)ν | ρ[ο]| (ι)| πον

(«Տէրօզնեա՛ր ինձ՝ Մախիտարին
[և] Ֆիլիպոսին»)։ Կնիքի մյուս երեսի վրա կա հայերեն արձանագրություն։
Հրատարակչների ընթերցումը ստուգել են պրոֆ. Ժ.—Պ. Մահեն և զր. Զ.
Պտուկյանք. «Տառա(յ) [ի] ս Մխիթարա(յ) ե[ւ] Փ [ի] փապոս»։

Այս կնիքի նշանակությունը դժվար է գերազանհատել: Հարցն այն է, որ եթե հայերիս համար Բյուզանդական կայսրության մեջ ծառայած բազմաթիվ «Մախիտարների» ազգային պատկանելությունը կասկած չի հարուցում, ելնելով այդ անձանվան (Մախիթար) տոհմիկ հայերեն լինելուց, ապա ոչ ընդ որ լուրջ պատկանդագետներն են այդ միտքը բաժանում: Մ[ը]խիթար անվան մեջ հնչող, բայց չգրվող «բ» կիսաձայնը, այդ հնչման հունարենում բացակայելու պատճառով արտահայտվելով «α»-ով (Մախիտար), համահնչուն է դառնում: հունարեն αχϋη (մարտ) բառին, իսկ ամբողջությամբ՝ Մախիտար, համահնչուն է դառնում հունարեն παχυτερις գոյականին, որ նշանակում է

¹ Bernard Couille and John W. Nesbitt. A Bilingual Rarly in the Dumbarton Oaks Collection of Lead Seals. A Greek/Armenian Bulla of the Later 10th/Early 11th Centuries. Dumbarton Oaks Papers, № 43, 1989, p. 121—123. *Կարևոր է նշել, որ Վ. Զալյառը իր մի հոդվածում* (Ein Bleisiegel mit hebräischer Legende aus dem 12. Jh., Jahrbuch der österreichischen Byzantinistik, Bd. 26 (1977), S. 110, n. 6) *խոսում է հունա-հայկական արձանագրություններով երբեք այլ կնիքների մասին, որոնցից մեկը* *դասվում է Վենետիկի Մխիթարյանների մոտ, մյուսը՝ Վիեննայի Մխիթարյանների, Լերբորգը՝ բյուզանդական կնիքների հետազոտող Գ. Զաքոսի լեզվային արձանագրությունից երկու կնիք գտնվում են Վ. Զալյառի հավաքածուում, մեկ հատ՝ Վենետիկի Մխիթարյանների, իսկ ԱՄՆ-ում՝ երկուսից ոչ պակաս Բոլորն էլ, ըստ Զալյառի, անտիպ (1977 թ.):*

2 Այդ կնիքների մի մասը հրատարակված է: Բ. Քուլիի և Ջ. Նեսրիտի վկայությամբ, Դմբարտոն Օբսի հավաքածուում կա շուրջ 80 կնիք արարներին և ասորերին արձանագրությամբ (նյվ. աշխ., էջ 121, ծան. 2):

«մարտիկ»³։ Ահա սրա հիման վրա բյուզանդագետները բյուզանդական կայսրության մեջ գործած բազմաթիվ Մախիտարներին հունական ծագում էին տալիս⁴։

Անցնենք Պետական էրմիտաժի կնիքների հավաքածուում հայտնաբերված հունա-հայկական արձանագրության կնիքին։ Նրա շիֆրն է՝ Μ—2062⁵, տրամագիծը՝ 16 մմ, և էրմիտաժ է մուտք գործել 1931 թ. նախկին «Կոստանդնուպոլսի Ռուսական Հնագիտական Ինստիտուտի» կնիքների հավաքածուի հետ։ Հնագրական տվյալների հիման վրա, սույն հոդվածի հեղինակներից մեկի (Վ. Շ.) կարծիքով կնիքը թվագրվում է X—XI դդ.։ Կնիքի մի երեսի վրա կա հինգ տողից բաղկացած հունարեն արձանագրություն, որ վերծանվում է հետևյալ կերպ.

Κ Ρ,

ΤΩΛΑΔ

Γ ΕΩΡΓ,

ΤΟΜΑΜ

Γ ΕΝ

+Κ(ύρι)[ε] β(οτ)[η(ε)] (αδէր ոգահա

τῶ σῶ ὁ(οὐ)ω) ծառալին քո

Γεωργ(ιω) Գեորգալ

τῶ Μαμ- Մամ-

γέν(τ) գենյա)

Կնիքի մյուս երեսի վրա հստակ կարդացվում են հետևյալ տառերը.
[ԳԵ-]ՈՐԳԱՄԱՄԳ-ԵՆԱՅ

որ հունարեն արձանագրության վերջին երեք տողերի բառացի թարգմանությունն են։ Չեն դրոշմվել հունարենի առաջին երկու տողերը՝ «Տէր օգնեա»⁶ ծառային քո» բառերը։



Գեորգ Մամգենի արճճե կնիքը (խոշորացված է երկու անգամ)

Կնիքի վրա չկա նրա տիրոջ որևէ տիտղոս, պաշտոնի անվանում, ծառայության վայրի անուն, ուստի հնարավոր չէ նրան նույնացնել բյուզանդական

³ Այդ կարծիքին էր Վ. Լեռնը. Legendes sigillographiques et familles byzantines, Echos d'Orient, t. 35, 1932. p. 348, ծան. 2, Բայց հետագայում նա փոխեց իր տեսակետը և նրանց հայ համարեց. Տե՛ս նույնի Le Corpus..., V. 2, p. 249.

⁴ Երբ սույն հոդվածի հեղինակներից մեկը (Ղ. Ք.), ծանոթանալով Ա. Պ. Կոմդանի՝ Բյուզանդական կայսրության ավազանու կազմում XI—XII դդ. գործած հայերին նվիրված

և հայկական աղբյուրներում հանդիպող որևէ համանուն գործչի հետ: Բայց կա մի կարևոր հանգամանք, որ անգնահատելի է դարձնում այս կնիքի նշանակությունը: Դա «Մամգենայ» (սեռ. տր. հոլով.) անունն է, V դարից հետո աղբյուրներում այս անվան հիշատակության առաջին հայտնի դեպքը, ուր անունն արդեն տոհմանվան իմաստ է ստացել: Սա Մամիկոնյան տոհմանունն է, հետևաբար հիշյալ Գեորգը պատկանում էր Մամիկոնյան ընտանիքին: Խնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ, ինչպես ժամանակին նշել էր Ն. Ադոնցը, «բոլոր այն հայերը, որոնք դերակատարներն են հանդիսանում բյուզանդական պատմության մեջ, գրեթե բացառապես պատկանում էին հայ ազնվականության դասին»⁷: Բայց բանն այն է, որ Հայաստանում քաջ հայտնի նախարարական ընտանիքները՝ Մամիկոնյանները, Բագրատունիները, Սյունիները, Կամսարականները, Արծրունիները և շատ ուրիշներ բյուզանդական աղբյուրներում հանվանե հիշատակված չեն⁸: Այդ առթիվ Ն. Ադոնցը իրավացիորեն գրում է. «Բյուզանդական հայերի տոհմական ծագումը դժվար է որոշել հաստատապես, եթե օգնության չեն գալիս հայ աղբյուրները դրական ցուցումով»⁹: Ուսումնասիրողները աշխատում են որոշել Բյուզանդիայում աչքի ընկած հայ գործիչների տոհմանունները՝ ելակետ ունենալով նաև այն հանգամանքը, որ «նախարարական տները տոհմական անուններ ունեին մի հայտնի չափով յուրահատուկ, որոնց միջոցով կարելի է երբեմն, որոշել, թե ով ո՞ր տոհմին էր պատկանում»¹⁰, Ն. Ադոնցը, խոսելով Բյուզանդիայում հայ նախարարական ընտանիքների խաղաղած դերի մասին (հատկապես IX դարում), առաջին հերթին նշում է Մամիկոնյաններին¹¹, թեև բյուզանդական և ոչ մի աղբյուրում «Մամիկոնյան» տոհմա-

գրքի ձեռագրին, հեղինակին ասաց, թե Մախիտարները հայ են, նրանց անունը՝ հայկական է (Մախիթար), դա նրան այնքան էլ չհամոզեց: Նա նրանց (թվով 9 հոգու) տեղադրեց իր գրքի 3-րդ գլխում, որ վերնագրված է՝ «Ենթադրաբար հայկական ծագմամբ ընտանիքներ» (Семья предположительно армянского происхождения): А. П. Каждан. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв. Ереван, 1975, с. 100—103. Միջ. դեռ. Ն. Ադոնցը իր մի հոգվածում (Notes arméno-byzantines I. Les sceaux des Makhi tar. Etudes arméno-byzantines. Lisbonne. 1963, էջ 137—141) ուսումնասիրության ենթարկելով «Մախիտար» անունը կրող բյուզանդական երկու կնիքներ, ցույց է տվել, որ խոսքը Մախիթար անվամբ հայազգի գործիչների է վերաբերում, որտեղ այդ անունը ազգանուն է դարձել (Նիկեոսա Մախիտար և Վասիլ Մախիտար):

⁵ Էրմիտաժում M—3323 շիֆրի տակ պահվում է Հունա-հայկական արձանագրությամբ մի կնիք էս: Մի երեսին Հովհաննես Մկրտչի պատկերն է օ օ (γϛϞ) Դ (δϛϛϞ) օ Որ(օ) [որօրօ] (Սր. Հովհաննես Կարապետ) արձանագրությամբ, մյուս երեսին կարելի է կարգալ... ՀԱՆՆԻՍԻ ([ՅՈՎ]ՀԱՆՆԻՍԻ):

⁶ Բյուզանդական կնիքների բացարձակ մեծամասնությունը սկսվում է «Տէր օգնեա» (կամ՝ «Աստուածածին օգնեա») բառերով: Հետաքրքրական է նշել, որ այդ բառերը հանդիպում են Տաշիր-Ձորագետի թագավոր Կյուրիկե I-ի միակ հայտնի դրամի վրա. Տ[է]Ր ՈՅՆԷ ԿՈՐԻԿԷԻ ԿՈՐԱՊԱՊԱՆԱՍԻ: Տե՛ս P. Z. Bedoukian. Medieval arménian coins.— Revue des Etudes Arméniennes, t. VIII, 1971, p. 427.

⁷ Ն. Ադոնց. Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր, 867—886).— Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 495:

⁸ Բացառություն է կազմում Առն ՄI կայսեր (886—912 թթ.) կնոջ Զոյեի նախկին ամուսինը՝ Բեռդուոս Գունիացիցեսը, որ հավանաբար Գնունյաց տոհմին էր պատկանում: Տե՛ս Հ. Մ. Բարթիկյան. Հայկական նախարարական տոհմանվան եղակի հիշատակություն բյուզանդական աղբյուրներում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 4, էջ 135—141:

⁹ Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 496:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

նունը հանվանն նշված չէ։ Ահա վերջիններիս անունների հիման վրա փորձեր կատարվեցին հանգելու այն եզրակացության, որ Թեոդոսիոս և Հուստինիանոս կայսրերի Դատաստանագրքերում հիշված բյուզանդական նշանավոր երկու գործիչ՝ պրեպոզիտոսներ NUSIMOS - ր (Մուշեղ) և Artaxes - ր (Արտաշես)¹², ապա և 902/903 թ. վախճանված սբ. Մարիամ Նորավկան՝ Վարդան և Վահան անունները կրողների մայրը, որ սերում էր Վասիլ I կայսեր Թագավորության ժամանակ (867—886 թթ.) Բյուզանդիա եկած «Մեծ Հայքի մեծամեծներից», պատկանում էին Մամիկոնյանների ընտանիքին¹³, խնդրո առարկա կնիքն ահա առայսօր հայտնի բյուզանդական միակ աղբյուրն է, որ մեզ տալիս է բյուզանդական հայ գործիչ տոհմանունը (Մամիկոնյան)։

Արդ, անհրաժեշտ է կանգ առնել կնիքի վրա նշված այդ անվան ձևի վրա։ Հայկական աղբյուրներում «Մամգեն» ձևը վկայված չէ։ Մովսես Խորենացին (Հայոց սլատմութիւն, Բ, ձա, ձդ), Ստեփանոս Տարոնացին (Բ, ա) հիշում են Տրդատ III-ի օրոք հանդես եկած Մամգուն (սեռ. Մամգունայ) անունով մի նախարարի, որ դարձավ Մամգունեան (Մամիկոնեան) նախարարական տան նախահավր։ Կասկած չկա, որ «Մամգեն»-ը Մովսես Խորենացու հիշած «Մամգուն» անունն է, որ այդ ձևով ահա հանդես է գալիս կես հարամյակ անց¹⁴։

Ի՞նչն է պատճառը, որ հիշյալ Գեորգը իր կնիքի վրա նշել է իր անունը ոչ միայն հունարեն, այլև հայերեն։ Այն փաստը, որ կնիքը եղել է Կոստանդնուպոլսի Ռուսական Հնագիտական Ընկերության հավաքածուում, ամենին էլ չի նշանակում, թե կնիքը շրջանառության մեջ է եղել կամ գտնվել է հենց Կոստանդնուպոլսում։ Բյուզանդական և ոչ մի հայ գործիչ, եթե նա ապրել և ծառայել է զուտ հունական միջավայրում (Կոստանդնուպոլսում, Թեսալոնիկեում, հունական այլ շրջաններում) իր կնիքի վրա հայերեն չէր գրի, դա անիմաստ էր։ Ավելի հավանական է, որ բյուզանդական հայազգի այդ անձնավորությունը գործել է Բյուզանդիայի կազմում գտնվող հայկական նահանգներում։ Ինչպես հայտնի է, դեռևս Ռոմանոս I Լեկապենոսի ժամանակներից (920—944 թթ.) կայսրության կազմի մեջ մտան զուտ հայկական բնակչությամբ նահանգներ (Տարոն, Դերջան, Հարթ, Ապահունիք, հետագայում նաև Տայք, Վասպուրական, Շիրակ), որտեղ սկսեցին ծառայել հայկական ծագումով բյուզանդական գործիչներ¹⁵։ Ահա սրանցից մեկըն էլ պիտի լինի խնդրո առարկա կնիքի տերը։

12 Հ. Բարթիկյան. Առաջին Մամիկոնյանների բյուզանդական արքունիքում.— «Պատմա-րանաոորական հանդես», 1986, № 3, էջ 11—15։

13 Բ. Մ. Բարթիկյան. () Византизм и Византизм в Армении и в Византии: Источники в Источниках — «Պատմա-րանաոորական հանդես», 1980, № 3, էջ 244—250։ Նույնի՝ Մամիկոնյան (") սուրբ Մարիամ Նորավկայի (+902/903 թթ.) բյուզանդական վարքը.— «Էջմիածին», 1975, ԺԲ, էջ 39—46. 1976, Ա, էջ 42—49, 1976, Բ, էջ 52—57։

14 Հ. Աճառյանը հիշում է վեց անձնավորություններ, որ կրել են «Մամիկոն» անունը, յայց միայն առաջինն է կոչված «Մամգուն»։ Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, երեւան, 1946, էջ 185։

15 Նրանց, ինչպես և հիշյալ շրջաններում, գլխավորապես բյուզանդական Մեծ Հայքի «Թերերիայի» (Տայք), «Թերերիայի և Մեծ Հայքի» բյուզանդական բանակաթեմի հայ և ոչ հայ կառավարիչներին պատկանած, Պետական էրմիտաժում պահվող բազմաթիվ արձեռն կնիքները հատուկ ուսումնասիրության են ենթարկվել։ Մանրամասն տե՛ս В. С. III андропская. Неизвестные печати Аарона, магистра и дуки Иверии и Великой Армении и проедра и дуки (XI в.).—Сообщения Государственного Эрмитажа, 1973, XXXVII, с. 60—64. О н а ж е. Эрмитажные печати Филарета Врахамия (Варажнуни).—«Լրագրեր հասարակական գիտությունների», 1975, № 3, էջ 36—49։ Նույնի՝ Неизвестные пра-

* * *

Սույն հոգովածը հանձնվել էր հրատարակություն, երբ ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտի Լենինգրադի րաժանմունքի գիտաշխատող Լ. Գ. Կլիմանովը սիրալիր կերպով մեզ հայանեց, որ հիշյալ ինստիտուտում ղեկարարված և մշակման մեջ գտնվող արձան կնիքների Ն. Պ. Լիխաչովի ժողովածուում (№ 54), «Vatja и Восюк» րաժնի № 19-ն իրենից ներկայացնում է Գեորգ Մամգենի արձան կնիքի մի երկրորդ օրինակը: Հապավումները րացած հունարեն արձանագրությունը կարգացվում է. ΚΥΡΙΕ ΒΟΗΘΕΙ ΤΩ ΣΩ ΔΟΥΛΩ ΓΕΩΡΓΙΩ ΤΩ ΜΑΜΓΕΝΗ («Տէր օգնեա ծառային քո Մամգենայ»), այսինքն ոչնչով չի տարբերվում էրմիտաժի կնիքի հունարեն արձանագրությունից: Հայերեն արձանագրությունը պահպանել է էրմիտաժի օրինակում գուրս ղեկած սկզբի երկու տողերը հս: Այն կարգացվում է. ԱՄ ՈԳՆԵՆ ԳԻՅՈՐԳԱ ՄԱՄԳԵՆԻՆԱՅ: Անկասկած է. որ երկու կնիքներն էլ մեկ գրողմամայրի գրողմվածքներ են:

Մեր պարտքն ենք համարում խորին շնորհակալություն հայտնել Լ. Գ. Կլիմանովին սույն կնիքի հրատարակությունը մեզ թույլաարելու համար:

ВИЗАНТИЙСКАЯ СВИНЦОВАЯ ПЕЧАТЬ С ГРЕКО-АРМЯНСКИМИ НАДПИСЯМИ ИЗ СОБРАНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ЭРМИТАЖА

В. С. ШАНДРОВСКАЯ (Ленинград), Р. М. БАРТИКЯН

Резюме

Из хранящихся в Государственном Эрмитаже 12 000 византийских свинцовых печатей 8 000 имеют надписи на греческом языке, в которых часто упоминаются личные и родовые имена, титулы, чины, места службы их владельцев. Здесь же в ограниченном количестве встречаются и иноязычные печати (латинские, арабские сирийские), а также двуязычные (греко-латинские, греко-арабские). Таковые имеются и в других хранилищах за рубежом, как и в частных коллекциях специалистов. Эрмитажная с греческой и армянской надписями печать (ее шифр—М-2062) поступила в Эрмитаж в 1931 г. в числе печатей собрания бывшего Русского Археологического Института в Константинополе и датируется X—XI вв. Греческая надпись читается: Κύριε βοήθεε τῷ σῷ δούλῳ Γεωργίῳ τῷ Μάμγενῃ («Господи, помоги рабу твоему Георгию Мамгену»). Армянская же надпись гласит: [Գե]որգա Մամգենայ («Георгию Мамгену»). Не тиснуты слова «Господи, помоги рабу твоему» греческого текста. В данном контексте личное имя «Мамген» имеет значение родового, и его носитель Георгий бесспорно принадлежал к знаменитой армянской аристократической семье Мамиконидов. Известно, что родовые имена византийских деятелей армянского происхождения ни в одном византийском источнике не зафиксированы (за исключением деятелей из рода Гнуни) и их принадлежность к той или иной феодальной фамилии выясняется косвенными данными или же прямыми сведениями армянских источников. Печать Георгия Мам-

витель византийской фемы Иверия.— *նույն տեղում*, 1976, № 9, էջ 79—86: նույնի՝ Исаак Комни—правитель фемы Иверия.—«Պատմա-րանասիրական հանդես», 1983, № 4, էջ 110—117: նույնի՝ Печати армянских деятелей X—XII вв. и правителей Васпуракана.—IV Международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов. Ереван, 1985. с. 395—396. նշանա այստեղ, որ Պեասական էրմիտաժում պահվում են հայկական ընտանիքներից սերող րյուզանդական մի շարք գործիչների (Վահրամյանների (Վրախամյանների), Վարդիսների, Գամրասների, Դալասանների, Կասակալոների, Կարկուսների, Մխիթարների, Սոսիկների, Սկրբոսների, Թևոդորականների և ուրիշների) արձան կնիքները հունարեն արձանագրություններով:

гена—единственный известный нам в византийских источниках случай упоминания родового имени Мамиконидов. Известный армянский языковед Р. Ачарян в своем словаре армянских личных имен упоминает пять личностей, носящих имя Мамикон, и одного, носящего первоначальную форму этого имени—Мамгун, которого Мовсес Хоренаци считает родоначальником Мамиконидов. Факт существования на византийской печати армянской надписи свидетельствует о том, что ее владелец жил и служил в армянской среде, скорее всего на территории Армении, захваченной Византией в X—XI вв.

* * *

Статья была сдана в печать, когда сотрудник Ленинградского отделения Института истории АН СССР Л. Г. Климанов любезно сообщил нам, что в неопisanном и находящемся в обработке фонде Н. П. Лихачева в собрании ЛОИИ АН СССР (№ 54), в отделе «Восток и Восток» под № 19 хранится второй экземпляр печати Георгия Мамгена. Греческая надпись та же, что и в эрmitажном экземпляре. Армянская надпись сохранила две первые строки, отсутствующие на эрmitажной—*ՄԵ ԹԳԵԵ* («Боже храни»). Бесспорно, что оба моливовула отпечатки с одного и того же буллотирня.

Считаем своим приятным долгом выразить Л. Г. Климанову свою искреннюю благодарность за разрешение публикации этой печати.